АССОЦИАЦИЯ
АРМЯНСКИХ
ПРЕДПРИНИМАТЕЛЕЙ

102028, ք. Մոսկվա
Պոդկոլոկոլնիյ նրբանցք
տուն 13/5, շին.1
+7 (495) 419 51 55
aap-pro.ru

Ամսաթիվ 09.07.2021

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Արարատ Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան,

Սույն թվականի սեպտեմբերի 7-13-ը Հայաստանի Հանրապետությունում (ք. Դիլիջան) կմեկնարկի Buissup Global Forum-ը: Նախագիծն իրականացվում է «Հայ Գործարարների Ասոցիացա»-ի նախաձեռնությամբ և «Տաշիր» ընկերությունների խմբի աջակցությամբ: Buissup Global Forum-ի նպատակն է մեկ հարթակում միավորել տարբեր բիզնես գաղափարներ ունեցող 200 մասնակիցներին՝ ապահովելով նրանց բիզնես կրթությամբ և նպաստելով նրանց նախագծերի իրականացմանը:

Ֆորումը նվիրված է բիզնես հմտությունների զարգացմանը, որը կունենա հետևյալ խորագիրը՝ «Գաղափարից դեպի իրագործում»: Ինտենսիվ դասընթացը ներառում է հետևյալ փուլերը՝ գաղափարի գնահատում և մոդելավորում, մարքեթինգ և վաճառքներ, ֆինանսների կառավարում, նախագծի ներկայացում ներդրողներին:

Buissup Global Forum-ին մասնակցելու են 18 տարեկանից բարձր երիտասարդներ, որոնք հետաքրքված են բիզնես ոլորտում նոր հմտություններ ստանալու և արժեքավոր կապեր հաստատելու մեջ: Մասնակցելով Buissup Global Forum-ին, լավագույն նախագծերի հեղինակները հնարավորություն կունենան ներկայացնել իրենց ծրագրերը «Հայ Գործարարների Ասոցիացիա»-ի կողմից կազմակերպվելիք առաջիկա միջոցառմանը, որին ներկա կլինեն ավելի քան 100 հայ ազդեցիկ գործարարներ:

Սեմինարները վարելու են տարբեր երկրներից հրավիրված արհեստավարժ մասնագետներ, կայացած և հաջողակ ընկերությունների հիմնադիրներ, հայտնի գործարարներ և այլ ոլորտների առաջատար մասնագետներ, որոնք ներկայացնելու են իրենց հաջողության պատմությունները:

Հարգելի պարոն Գրիգորյան, խնդրում ենք հնարավորինս ներգրավվել Ձեր մարզի երիտասարդական կառույցներին՝ տարածելով մեկնարկող միջոցառման

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 5149
12. 07 2021 թ.

մասին տեղեկությունը Ձեզ հասանելի հարթակներում, ինչպես թվային, այնպես էլ դրանից դուրս:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով,

«Հայ Գործարարների Ասոցիացիա»-ի

Գործադիր տնօրեն ***Ղումաշյան Գ.Ա.***